

41-8

Գ. ԴԱՎԹՅԱՆ

ԵԽԱԿԱՌԻ ՄԵՎԿՈՒՑԹԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Գ. ԴԱՎԹՅԱՆ

ԵԽԱԽՈՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ

A 24083



Պատ. իմբուգիչ՝ Ա. Գողանցյան

Տել. իմբուգիչ՝ Ա. Սարգսն

Ազգային և Արվագան թիվ Ա. Գողանցյան

Համագործակցության 1934 թ. մարտի 6-ին

Առաջարկվել է աղաղակերպության 1934 թ. մարտի 14-ին

Թրութեա Խ. 100

Տիրամ 2000

Գում 35 200

ԿԵՐՆԻ/ՄԱՅԻ ՏԵՂՄԱՆ, ՅՈՐՎԱՀԱՆ, ԽԱՐԵՎԱՆԻ 50, ՀԱՅ. Խ. 94

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր յերկրագործության սոցիալիստական վերակառուցման
խոշորագույն լծակներից մեկը նրա քիմիացումն եւ քիմիական պա-
րաբռունյութերի զործածությունը

Յերկրագործության քիմիացումը մենք առաջին հերթին
սկսում ենք տեխնիկական մշակույթներից:


Մխախոսան ել տեխնիկական մշակույթների շարքին ե պատ-
կանում, ուստի մենք ամեն կերպ պետք ե ծավալենք ծխախոտի
քիմիացման աշխատանքները՝ շատ և լավ վորակի ծխախոտ ստո-
ւալու համար:

Մխախոտի մշակույթյան ազրոտեխնիկական ձեռնարկում-
ներէ կոմպլեքսի մեջ պարարտանյութերի գերը շափաղանց մեծ և
նախ և առաջ այն տեսակետից, վոր պարարտանյութեր դորժո-
դրելով, մենք կարող ենք կանոնավորել ծխախոտի բերքի վորակն
այս կամ այն չափով, մեր ուղածի պիտ:

Վորպեսդի հասկանալի լինի, թե ինչ ազդեցություն են գոր-
ծում տարրեր պարարտանյութերը ծխախոտի քանակի և վորակի
պրոց, պետք ե իմանալ, թե ինչ նյութեր կան ծխախոտի մեջ և
ինչպես են նրանք փոփոխվում պարարտանյութեր գործածելուց:

Ահա այդ հարցերը և ծխախոտի պարարտացման սկզբունք-
ները կազմում են սույն գրքույկի բովանդակությունը:

ՀԵՂԻՆԵԿ



Ա. ՆԻՍԱԽՈՏԻ ԲՈՒՅՈՒ ԱՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ամեն մի բույսի, այնպես ել ծխախոտի նորմալ առեցողության համար անհրաժեշտ գործոններն են՝ հողը կամ անդատու նյութերը, ոգը, ջուրը, լույսն ու լեռնությունը, չնարավոր չետել, թե այս գործոններից վորն եւ ամենից կարևոր՝ նրանք բոլորն ել անհրաժեշտ են բույսերի աճեցողության համար:

Մեր պայմաններում ոգը, լույսն ու ջերմությունն առառ են, իր պահանջն ել բաւարարվում եւ արհեստական կերպով՝ վառողմամբ, սակայն հողը բույսին անհրաժեշտ աննդանյութերով մեծ մասամբ աղքատ ե, կամ այդ օննդատու նյութերը հողի մեջ զըսնվում են այնպիսի դրության մեջ, վոր բույսերը չեն կարողանում նրանցով սնվել:

Այդ է պատճառը, վոր մարդիկ՝ յերկրագործության պատմության ընթացքում, ամենից շատ աշխատել են հողի դրությունը լավացնելու վրա՝ մշտել են ու պարարտացրել հողը:

Ծխախոտը, բույր այլ բույսերի նման, իրեն անհրաժեշտ աննդանյութերից միայն ածխաթթուն եւ ստանում ոգից, իր վերերկրյա կանաչ մասերով, գլխավորութեան տերեմներով։ Տերեմների ցածի յերեսին դանվում են ած քանակությամբ, այսպես կոչված հեծանցքներ։ Այդ հեծանցքների միջով ե, վոր ներծծվում ե, ածխաթթու գազը (CO_2), վորի ածխածինը (C) գործածվում ե բույսի կողմից ոռլա, շաքար, թազանթանյութեր, ճարպեր, սպիտակուցներ և այլ որդանական նյութեր կտղմելու ընթացքում, իսկ թթվածինը (O_2) նորից վերագառնում ե շրջապատի ողը։ Այս պրոցեսի համար անհրաժեշտ են լույս և ջերմություն։

Մնացած սննդանյութերը ծիսախոտի բույսն ստանում է հողից Այդ սննդանյութերը հողի մեջ զանգում են, ողում, ֆուս փորի, կալիումի, կըի, մագնեզիումի, յերկաթի, ծծմբի և այլ ելեմենտների տարրեր միացությունների ձևով: Բացի այդ, ծխախոտի բույսը ծծում և ջուր, վորի մեջ եւ զբանվում են ջրածինն ու թթվածինը, վոր նույնպես միանգամայն անհրաժեշտ են բույսի համար:

Իր արմատների վրա տարածված մաղմղուկների միջոցով ծխախոտը ներծծում է ջրի մեջ լուծված վերոհիշյալ նյութերը և ոպատքործելով ողից ստացում ածխածինը, կազմում է իր մաքմակ շատ կարելոր մասերը:

Ծխախոտն ել, մյուս բույսերի նման, իր նորմալ աճեցողության համար շատ ջուր և պահանջում: Անհրաժեշտ է, վոր ջրի անընդհատ հոսանք լինի արմատներից դեպի աերևները: Տերևներից ջուրը գուրբիչանում է հերձանցքների միջոցով:

Մեկ գրամ ջոր նյութեր կտղմելու համար ծխախոտը պահանջում է 300—500 գրամ ջուր:

Նայած թե ինչպիսի յե շրջապատի ջերմությունը, հողի և ողի խօնավությունը, ծխախոտի աերևներն ել լինում են նուրբ և խոշոր, կամ ընդհակառակը՝ մանր և կոպիտ:

Ծխախոտի բերքը հողից վերցնում է ավելի շատ մոխրանյութեր և աղոտ, քան կարտոֆիլը, շաքարի ճակնդեղը և մի շարք այլ մշակույթներ:

Այսպիսս, որինակ՝ ծխախոտի միջին բերքը (10,5 ցենտներ) կանաչ դրությամբ, մի հերթարից վերցնում է հետեւյալ քանակությամբ սննդանյութեր, կիրարամներով:

	Մերկ	Կալիում	Ա	Փոխարժեական	Ա
Ծխախոտի աերևները	228,5	66,8	78,6	10,6	51,6
> սողունները	92,1	40,1	18,0	13,1	40,1
Աճրով վերերեցայ մասն ։	319,2	106,4	99,9	23,7	91,7
Համեմատության համար բերենք նաև կարտոֆիլի և հացա-					

հաստիկների բերքի միջոցով մի հեկտար հողից վերցված նյութերի քանակը կիլոգրամներով՝

	Մոկ	Կալի	Ն	Գովազդ	Ագռա
Կարտոֆիլ	169,1	95,8	22,5	28,6	58,9
Հացարուխեր	125,7	26,2	9,4	18,5	36,8

Այն հանդամանքը, վոր ծխախոտի մշակույթը հողից այսքան շատ սննդանյութեր և վերցնում, ցույց ե տալիս; Բե վորքան հողատար պիսք և լինի ծխախոտագործը դեղի հողը, նրա մշակումն ու պարագատացումը, վորպիսդի ծխախոտի մշակույթն ապահովված լինի անհրաժեշտ սննդանյութերով:

ՍԽԱԽՈՏԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Մխախոտի քիմիական կազմը կախված է նրա մշակության հողա-կլիմայական պայմաններից, ծխախոտի սորտից, նրա դարպացման փաղայից և այլն:

Բացի այդ, թարմ ծխախոտը (տերեները) և արգեն մշակման յենթարկվածը — տարբեր կազմություն ունեն՝ ծխախոտը հավաքելուց հետո, մշակելու, չորացնելու ընթացքում փոխում և իր կազմը:

Մխախոտի թարմ տերեները մոտ $85-95\%$ ջուր են պարունակում (թացածը չոր նյութեր են), իսկ չորացրած տերեների մեջ ջուրը կազմում է ընդամենը $8-13\%$: Փոխվում են և այլ բաղադրիչները:

Ըստ Նեսուլերի ծխախոտի թարմ տերեների չոր նյութը բաղկացած է 80% որգանական, այրվող նյութերից և 20% հանքային նյութերից (մոխրանյութերից):

Այժմ համառոտակի կանդ առնենք այն նյութերի վրա, վարոնք գտնվում են ծխախոտի մեջ և այս կամ այն նշանակությունն ունեն նրա վորակը վորոշելու տեսակետից:

Նիկոտինը բուսական արկայոյինք կոչված, աղոստ պարունակող, բարդ, որդանական նյութ եւ Մաքուր վիճակում նիկոտինն անդույն, յուղանման հեղուկ եւ նիկոտինը մարդկանց համար խիստ թունավոր նյութ եւ Խնչպես նշում և ակաղեմիկոս Պըյանին ի կովը, մեկ սիդարի մեջ գտնվող նիկոտինի քառակը գերազանցում և մարդու համար մահացու դողան, և յեթե մեկ սիդարից մարդ չի մեռնում, առաջ այն պատճառով, վոր նիկոտինի մի մասն այրվում եւ և որպանիդմի մեջ չի մտնում:

Նիկոտինի քանակը ծխախոտի մեջ խիստ տարբեր և և կախված և ծխախոտի սորբաց, վորոշման ժամանակից և մի շաբթ այլ պայմաններից: Նույնիսկ միենանույն բույսի վրա ծխախոտի տորբեր տեղափոխությամբ քանակությամբ նիկոտին են՝ պարունակում:

Ընդհանուր առմամբ կարելի յէ առել, վոր նիկոտինը կարող եւ կաղմել ծխախոտի 5—6% և նույնիսկ ավելին, սակայն ծխելու համար պատրաստված ծխախոտի մեջ նրա քանակը սովորաբար հասնում և 3% Սրանից ավելի շատ նիկոտին պարունակելու դեպքում ծխախոտն անհնար և ծխել:

Սովորաբար զլանակների ծխախոտների համար խորհուրդ են տուլիս 1%—ից վոչ ավելի նիկոտինի պարունակություն:

Ծխախոտի լազ տեսակների մեջ նիկոտինը շատ չի լինում, ցածր տեսակի, վատորակ ծխախոտների մեջ՝ ընդհակառակը (որինակ մախորկան շատ նիկոտին և պարունակում): Վորքան նուրբ և ծխախոտի տերեր, այնքան քիչ և նրա մեջ նիկոտինը:

ՍՊԻՏԱԿՈՒԹՅԱՑԻ ՆՅՈՒԹԵՐ

Ծխախոտի մյուս բաղադրիչ մասերն ազուր պարունակող նյութերն են—սպիտակուցները, վորոնք ծխախոտի տարբեր սորտերի մեջ գտնվում են տարբեր քանակությամբ:

Սպիտակուցային նյութերի մեծ քանակությունները բոլոր ցովին ցանկալի չեն ծխախոտի վորակի տեսակետից:

Բանն այն եւ, վոր սպիտակուցային նյութերի այրման հետևանքով ստեղծվում են այնպիսի այրման պրոդուկտներ, վորոնք անդուրալի համ, հոտ և գառնություն են տալիս ծխախոտին:

Վատ, ցածր վորակի սորտերի ծխախոտի մեջ շատ սպիտա-

կուցային նյութեր են լինում, իսկ բարձրորակ ծխախոտներն ընդհակառակը՝ քիչ:

Տարրեր սորտի ծխախոտների մեջ սպիտակուցային նյութերի պարունակությունը ցույց են տալիս հետեւյալ թվերը՝

Սախորկա ($\text{Վորոնեժի } շրջանի)$ $16,37\%$ սպիտ. նյութ.

Մախորկա ($\text{Չերնիգովի } շրջանի)$ $13,57$ \gg \gg

Տրապիզոն $9,22$ \gg \gg

Սամսոն $9,80$ \gg \gg

Դյուքսիկ $7,79$ \gg \gg

Հյուսիսային (Նորդ) կարուինա $6,32$ \gg \gg

Այս թվերը ցույց են տալիս, վոր վորքան բարձրորակ և ծխախոտը, այնքան քիչ սպիտակուցային նյութը և պարունակում նաև:

ՍԱԼՊԵՏՐ (ՍԵԼԻՑՐԱ)

Ծխախոտի մեջ գտնվող այս նյութը—հանգային աղոտային նյութ եւ աղոտական թթվի աղը: Այս նյութերն այլ կերպ կուղում են նիտրատներ: Նիտրատները ծխախոտի բույսի մեջ կուտակվում են մանավանդ աղոտով հարուստ հողերի վրա: Յնթադրում են, վոր նիտրատների կուտակմանը նպաստում են ծխախոտի ծերատումն ու բճառումը:

Նիտրատների քանակը բույսի աճման ընթացքում միշտ փոփոխվում է: Կրասնոդարի ծխախոտագործական ինստիտուտի տը-վյալների համաձայն, նիտրատային աղոտի քանակը ծխախոտի դարդացման ընթացքում փոխվել ե այսպիս:

	Ցեղիտասարդ ցույսի մեջ	Մաղկման շրջանում
Արժանիք $m\%$	$0,178\%$	$0,037\%$
Ցողունի \gg	$0,614\gg$	$0,870\gg$
Տերեների \gg	$0,284\gg$	$0,170\gg$

Նիտրատների մի մասը ծխախոտի բերքի մշակման ընթացքում քայլայվում է, սակայն պատրաստի ծխախոտի մեջ մնացած մասը նպաստում է նրա լավ այրվելուն: Այստեղ, ի դեպ, կարելի յեւ ասել, վոր պատրաստի ծխախոտի լավ այրվելու համար, նրան յերբեմն մարդիկ իրենք արհեստական կերպով մի քիչ սալպետեր են խառնում:

Անազոտ նյութերից թարմ տերևները պարունակում են թագանթանյութ. այս որգանական նյութն իրենից ներկայացնում է բուսական բջիջների մաշկը կամ պատերը:

Ցեթե ծխախոտի տերևի մեջ թաղանթանյութը հավասարաչափ տարածված է ըոլոր մտսերում, վորը չափազանց ցանկալի յեւ համարվում, նման դեպքում նա նպաստում է ծխախոտի լավ այրվելուն. (թաղանթանյութը թարմ տերևի մեջ մոտ 10% և կազմում, իսկ չոր նյութերի մեջ՝ $30—50\%$),

Սակայն, յեթե տերևների մեջ սկսում են զարգանալ գույն և անյութերը, վարոնք կազմելով տերևների ջղերը, կոշտացնում, կռապտացնում են ծխախոտը, այդ արդեն անցանկալի յեւ համարվում. (մասնավանդ սիդարի ծխախոտների համար):

ԱՆԱԶՈՏ ԵԿԱՏՐԱԿԱՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Ծխախոտի թարմ տերևների մեջ այս նյութերից աչքի յեւ ընկնում ու լան. ծխախոտի տերևները չորացնելուց, մշակելուց հետո, նրանց մեջ ոսլան խիստ պակասում է, իսկ նրա փոխարեն շատանում են լուծելի ածխաջրաները՝ զանազան շաքարանյութերը: Թարմ տերևների մեջ վերջիններս շատ քիչ են: Այսպես որինակ՝ Մյուլլեր-Թյուրգառն ծխախոտի թարմ տերևների մեջ գտել են $30—40\%$ ոսլա և միայն $0,8—1,2\%$ լուծելի ածխաջրեր՝ շաքարանյութեր: Անազոտ եկստրակտային նյութերի, ածխաջրաների ներկայությունը ծխախոտի մեջ ցանկալի յեւ համարվում:

Նկատված է, վոր վորքան բարձր է ծխախոտի վորակը, այնքան ավելի շատ են նրա մեջ այս խմբի նյութերը: Նկատված է նաև, վոր վորքան շատ են այս խմբի նյութերը՝ ածխաջրերը ծխախոտի մեջ, այնքան պակաս են նրա մեջ սպիտակուցային նյութերը իսկ մենք արդեն ասացինք, վոր սպիտակուցների մեծ չափով ներկայությունը ծխախոտի մեջ անցանկալի յեւ համարվում: Ուրեմն, ինչ վոր անուղղակի կապ կա ածխաջրաների և ծխախոտի ցանկալի հատկությունների միջև:

Կրամնողարի ծխախոտագործական ինստիտուտի հետազոտությունները ցույց են տվել, վոր յերբ լավ վորակի ծխախոտը պարունակում է $17,66\%$ ածխաջրեր, ծխախոտի ատարեր տեսակները, վորոնք ցատ վորակի մի նվազող շարք են կազմում, ունեն ածխաջրերի հետզհետե նույնպիս նվազող քանակություն,

այնինչ ոպետակուցային նյութերը, ընդհակառակը՝ ծխախոռի վորոկն իջնելու հետ ավելանում են (լազորակ ծխախոռների մեջ 6—7% ից նրանց պարունակությունը վատորակների մեջ հասնում է 14—16% ից):

ՈՐԳԱՆԱԿԱՆ ԹԹՈՒԵՐ

Ծխախոռի մեջ որգանական թթուների ընդհանուր պարունակությունը կարող է հասնել մինչև 15—16% ից, սակայն, սովորաբար նրանք ավելի քիչ են լինում:

Ծխախոռի մեջ պատահող թթուներից աչքի ընկնողներն են՝ խնձորաթթուն, կիտրոնաթթուն, թրթնչկաթթուն և այլն:

Յենթադրում են, թե վորթան շատ են թթուները, այնքան ավելի լավ վորթակի պիտի լինի ծխախոռը (նիկոտինը պակաս, լավ այրվող և այլն), սակայն այդ դեռ առացուցված չի համարվում:

ԵԹԵՐԱՑԻՆ ՑՈՒՄՆԵՐ

Ծխախոռի եթերային յուղերը կազմված են հոտավետ, անուշահոռ մի շարք բարդ եթերային յուղերի խառնուրդներից:

Եթերային հոտավետ յուղերը ծխախոռի բարձր վորթակը պայմանավորող նյութերից մեկն են. նրանք ծխախոռին տուին են հոտավետություն, արոմատ:

Ծխախոռի մեջ կան նաև խեժանյութեր, սակայն նրանց մասին մենք այսուեղ չենք խոսի:

ՍՈԽՆՐԱՆՑՈՒԹԵՐ

Ծխախոռը կազմող նյութերի շարքում նշանակալի տեղ են բռնում մոխրանյութերը՝ հանգային նյութեր, վորոնք չոր նյութերի 15—23% են կազմում:

Ծխախոռի քիմիայի գիտուն՝ զբրոֆ. Ծմուկի աշխատանքները ցույց են տվել, վոր վորթան շածր և ծխախոռի վորթակը, այնքան նա շատ մոխրի և պարունակում:

Ծխախոռի մոխրի մոտ 30% կազմում ե կալիումսուիդը (K_2O), համարյա նույնքան և կալիք (CaO), մացած մասը կազմում են այլ հանգային նյութերը՝ նատրիում (Na_2O), մագնեզիում (MgO), յերկաթ (Fe_2O_3), ֆոսֆոր (P_2O_5) ծծումը (SO_3), սիլիցիում (SiO_2), քլոր (Cl) և այլն:

Կալիումի և նատրիումի կարբոնատները (ածխաթթվա-

յին աղերը) հպատակմ են ծխախոտի լոզ այրվելուն, ինկ նույն այդ հիմքերի (ինչպես և հողալկայիական մնացածների) քլորիդ-ներն՝ ընդհակառակը:

Տարրեր հեղինակներ գտնում են, վոր նորմալ այրվելու համար, ծխախոտը պետք է պարունակի 0,4—0,6% վոչ ավելի թշոր և համենայն դեպք 30% վոչ պահան կալիումոքուր (K₂O). Ցերե քլորի պարունակությունը հասնում 2—3 և ավելի 0% -ի, ապա ինչքան ել շատ լինի կալիումը, մինույն և, ծխախոտը զուրկ կլինի լավ այրվելու հատկությունից:

Մի քանի խոսք ջերմության, լույսի և ռողի խոնավության և սըանց՝ ծխախոտի մշակույթի վրա ունեցած ազդեցության մասին.

Լույսը և ջերմությունը, ըստ Մայերի (Հոլլանդիա), ազդում են ծխախոտի բաղադրության վրա: Վորածես որինակ կարող է ծառայել այն հանգամանքը, վոր ջերմուցում մեծացրած ծխախոտն ավելի շատ նիկոտին և պարունակում, քան այն, վոր բաց ողում և աճել (ավելի ցածր ջերմաստիճանում),

Մի ուրիշ փորձ ցույց է տվել վոր թույլ լուսավորության դեպքում, նիկոտինի քանակը ծխախոտի բույսի մեջ ավելի քիչ է, քան ուժեղ լույսի տակ աճած ծխախոտի մեջ,

Հողի խոնավությունը, ըստ Մայերի, հետեւալ ձևով է աղդում ծխախոտի մեջ նիկոտինի պարունակության վրա:	
Հողի խոնավությունը 0% 0%-ով	Նիկոտինի պարունակությունը 0% 0%-ով
Միկ ջրունակությունից	

80	1,2
60	1,7
40	3,1

Ուրեմն՝ հօդի մեջ, խոնավության պակասելու հետ, ավելանում և նիկոտինի տակուր ծխախոտի մեջ. մի քան, վոր ցանկալի չեն:

Բացի այդ, վորովհետև ջրի պակասության դեպքում, բույսը պակասեցնում են իրենց գոլորշիացման մակարդակը, ուստի չոր կլիմայական պայմանները նպաստում են մանր, հաստ, կոպիտ և նիկոտինով հարուստ տերևների դարձացմանը, Այս դեպքում կանոնավոր ջրելք կարող է բարձրացնել ծխախոտի վորակը:

Այժմ մենք արդեն ծանոթացանք ծխախոտի բաղադրության հետ, հնարավոր և անցնել ծխախոտը պարարտացնելու ուսմունքի հիմունքների լուսաբանմանը:

Բ. ՇԽԱԽՈՏԻ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ

ՊԱՐԱՐՏԱՅՈՒԹԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պարարտանյութերի եֆեկտիվությունը կախված է՝ մի կողմից բույսի աճման պայմաններից, մյուս կողմից՝ տնտեսության կազմակերպման յեղանակից, Վորքան բարձր և սոցիալիստական յերկրագործության զարգացման աստիճանը, այնքան տվելի արդյունավետ և պարարտանյութերի գործածությունը:

Միախոտի դաշտերի պարարտացումը չափազանց ուշադիր և զգուշ մոտեցում և պահանջում Մխախոտն այն կուլտուրաներից են, վորի բերքը և վորակը մեծ չափով ու ավելի ակնահայտ կերպով, քան մյուս մշակույթների դեպքում, կախումն ունի տարրեր պարարտանյութերի գործածությունից: Այս տեսակետից, ծխախոտի ռացիոնալ պարարտացումը չափազանց խոշոր նշանակություն և ստանում ծխախոտի բերքն ու նրա այս կամ այն, մեզ համար ցանկալի վորակն ստանալու, այդ վորակը մարդու ուղածի նման վորփիներու պրոցեսը մարդու կողմից դեկավարելու տեսակետից:

Մխախոտի պարարտացումը բարդ և նրանով, վոր չի կարելի ծխախոտի մշակման բոլոր դեպքերում ել պարարտացման նույն մօտեցումն ունենալ: այդ մեծ չափով կախված և նրանից, թի բնչպիսի արտադրանք ենք ուզում ստանալ: Այսպես որինակ, յեթե բարձր վորակի ծխախոտի պըրտերը մենք առատ կերպով չենք պարարտացնում ազոտային պարարտանյութով, կամ գումարդով, բավարարվելով ավելի քիչ, բայց բարձր վորակի բերքով, ապա մախորկայի և այլ հասարակ ծխախոտների դեպքում, մենք հակառակ մոտեցում ենք ունենում մեծ բերք ստանալու համար:

ՇԽԱԽՈՏԻ ՄԵԱԿՈՒԹՅԻ ՀԱՄԱՐ ԱՆՂՐԱԺԵՏ ՀՈՒԱՑԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Միայն աղուտն եքը, ճահճային հողերն ու ավազուտն են են, վորոնց վրա առայժմ անհնար և ծխախոտի մշա-

կությունը, մասցած բոլոր հողերն այս կամ այն արհեստական ձեռնարկումից հետո (հողի մշակությունը, պարարտացումը և այլն), կարող են պիտանի լինել ծխախոտի մշակության համար։ Մակայն այդ դեռ չի նշանակում, թե ծխախոտի համար բոլոր հողերն ել նույն նշանակությունն ունեն։ Հողի տեսակից են կախված ծխախոտի արտադրանքի մի շարք կարեր՝ հատկությունները։

Ծխախոտը պահանջում է խոր, տաք և բավարար խոնավություն պարունակող հողեր։ (սակայն հենց այստեղ նշնչնք, վոր չափից ավելի խոնավությունը խիստ վատ և աղդում ծխախոտի վորակի վրա), Հողը պետք է փուխր և ստրուկտուրային լինի, վորպեսզի խոնավությունը, ողն ու ջերմությունը թափանցեն նրա մեջ։

Հողի մեխանիկական կազմի տեսակետից, ծխախոտի համար նպաստավոր են թեթև, մի քիչ ավագուտ, կամ կավառվագայային հողերը և լավ ե, յերբ հողը մի քիչ ել խճուտ և լինում, իսկ նրա կառուցվածքը կնձկային։ Հողի նման մեխանիկական կազմը պայմանավորում է նրա ֆիզիկական հատկությունները՝ այդպիսի հողն ավելի փուխր և լինում (ծխախոտի խոր գնացող արժանաները կարողանում են լավ զարգանալ ու անհրաժեշտ սննդանյութեր մատակարարել բույսի վերերկրյա մասերին), ողն և ջերմությունն ել լավ են խաղում, թափանցում հողի ներսը. մի բան, վոր մեծ նշանակություն ունի ծխախոտի մշակության համար։

Նկատված ե, վոր յեթե հողը մի քիչ խճուտ ե և ավազախառն (բայց ավաղի քանակը հողի մեջ նրա 50% օշից վոչ ավելի), ապա այդպիսի թեթև հողերից, չնայած մի քիչ պակաս բերք և ստացվում, քան յենթադրենք ուժեղ սևահողի կամ կավահողի վրա, այնուամենայնիվ ծխախոտի բերքի վորակն ավելի բարձր է լինում։

Սակայն չափից ավելի ավաղուտ հողերն անցանկալի յեն ծխախոտի մշակության համար։

Ծխախոտի մշտակությունը միանդամայն հնարավոր ե նաև կավային հողերի վրա։ Ընդհանրապես կավային հողերի վրա ծխախոտը մեծ բերք և տալիս սակայն նկատված ե, վոր այդ բերքը վորակով համեմատաբար ցածր և լինում (արոմատը պակաս, այրվելու անբավարար հատկություններ և այլն)։

Մանը կավային հողերի վրա ծխախոտի վեգետացիան (աճման շրջանը) յերկարում ե. դրա համար ել կավային հողերի վրա ծխախոտի հաջող մշակությունը հնարավոր ե տաք շրջաններում, ուր կաֆրելի յե ծխախոտը շուտ գաշտ տեղափոխել և ապահովել նրա ժամանակին հասնելը:

Դեպի հումուսի (հողի սրբանական բարդ նյութերի) պարունակությունը հողի մեջ ծխախոտը շատ պահանջկատ ե, ըստ վարում, մի կողմէց՝ հումուսով աղքատ հողերում ծխախոտը լավ չի աճում, մյուս կողմից, չափից ավելի հումուսն ել խիստ վատ և անդրադառնում ծխախոտի վորակի վրա:

Այս հանդամանքը պահանջում է լուրջ մատեցում ծխախոտն այս կամ այն հողի վրա մշակելու և մանավանդ՝ պարարտացնելու դեպքում:

Ծխախոտի տարբեր տեսակները և սորտերը տարբեր պահանջկություն ունեն դեպի հումուսի պարունակությունը հողի մեջ:

Ընդհանուր առմամբ հումուսով հարուստ հողերի վրա (ինչպիսին են ուժեղ սևահողերը) ստացվում ե ծխախոտի մեծ բերք, սակայն համեմատաբար ցածր վորակի թարձրութակ սորտերի ծխախոտն այս դեպքում ստացվում ե շատ ուժեղ (թունդ), կոշտ, վատ այրվող և քիչ հոտավետ, գույնը՝ մուգ, կտրմբավուն և վոչ դեղին: Հատկապես գլանակների պատրաստման համար ծառայող ծխախոտը բոլորովին չի հաշտվում հողի մեջ չափից ավելի հումուս լինելու հետ:

Սակայն, բոլորովին այլ մռաեցում պետք ե ունենալ ծխախոտի հասարակ սորտերի և մախորկայի մշակության դեպքում, վարոնք որինակ, ուժեղ սևահողերի վրա տալիս են մեծ բերք, վորի վորակն ել այդ սորտերի դեղքում բավարար ե համարվում:

Ծխախոտի մշակույթի վերաբերմունքը դեպի հողի հումուսը, ինչպես կտեսնենք, մեծ նշանակություն ունի ծխախոտն որգանական պարատանյութերով և ազոտով պարարտացնելու տեսակետից:

ՈՐԴԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՑՈՒԹԵՐ-ԳՈՍԱՎՐ

Բեռ հումուսի չափից ավելի լինելը հողի մեջ անցանկալի յե ծխախոտի համար, բայց այդ դեռ չի նշանակում, թէ

հողը բավարար չափով հումուս չպետք է ունենաւ Արտադրության մեջ և մանվանդ մեր հողային պայմաններում քիչ չեն դեպքեր, յերբ ծխախոսապորթյական տնտեսությունները պետք է լուրջ հոգ տանեն հողը հումուսով՝ որզանական նյութերով հարսացնելու մասին:

Բանց նրանումն ե, վոր հումուսը, բացի ծխախոսին անհրաժեշտ սննդանյութեր մատակարար ընլուց, նաև լավացնում է հողի ֆիզիկական հատկությունները:

Հողի այդ հատկությունները, ինչպես և մշակող բռւյը սննդանյութերով ապահովելու նպատակով, գործ են՝ ածում ու բուդանական պարագաներու համար գորպես սննդությութերից ամենից տարածվածը գոմաղբն ե:

Գոմաղբը լավացնում է հողի դրությունը, նպաստում է հողի մեջ խոնավության պահպանմանը «տաքացնում» և ջայթայվելով, ծառայում է բռւյսի համար զորպես սննդությութերից ամենալու գործում:

Մանավանդ մեր ցածրադիր շրջանում, հողն որդանական նյութերով պարարտացնելու մեծ նշանակություն ունի բարձր բերք ստանալու գործում:

Տարբեր հողերի վրա տարբեր քանակությամբ գոմաղբ պետք է գործածել. պետք եմ միշտ հիշել, վոր իր մեջ չատ ազոտային նյութ պարունակելու հետևանքով, չափից ավելի ի քանակությամբ գոմաղբը, թեև բարձրացնում է բերքի քանակը, բայց կարող է իջնենել ծխախոտի վորակը:

Ուստի, գոմաղբի չափը տվյալ պայմաններում, պետք է վրաբշել այն հաշվով, վոր բերքը բարձրանա մինչեւ այն աստիճանը, քանի դեռ ծխախոտի վորակը չի ընկել:

Գոմաղբի ընդհանրապես ընդունված դողան ծխախոտի համար 18 տոնն ե—մեկ հեկտարին, սակայն վերուիշյալ պայմաններն ինկատի ունենալով, այդ դոզան կարելի յեւ մեծացնել կամ փոքրացնել:

Գոմաղբը ծխախոտի դաշտը պետք է մուցնել կամ աշնանից ն կամ վաղ գարնանից՝ ծխախոտը ջերմոցներից դաշտ անդախուելուց առնվազն 2 ամիս առաջ: Գոմաղբը չպետք է թարմ լինի. նա պետք է արդեն մասամբ քայթայված լինի:

Ծխախոտի բերքը բարձրացնում է նաև կանաչ պարագաներու մը, սակայն՝ հնարավորություն չունենալով այսոեղ խռուել կանաչ պարարտացման տեխնիկայի մասին, բավարարվենք միայն այդ հանդասանքը նշելով:

ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ

Մենք շատ քիչ փորձ ունենք ծխախոտը հանքային նյութերով պարարտացնելու դորժում, ըստ մեր ծխախոտագործական տարրեր շրջանների:

Հիմովելով մեր հարևան յերկըների փորձի վրա և ի նկատի ունենալով մեր հողային ու կլիմայական պայմանները, ծխախոտի հանքային պարարտացման մասին կարելի յե ասել հետեւալը. մեզ մոտ ծխախոտը պետք է պարարտացնել ազատի, ֆուն ֆուրի և յերբեմն կալիս մի պարարտանյութերով:

ԱՊՈՏԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՊԱՑՄԱՆԵՐԸ



Ծխախոտի աղոտային պարարտացման ընթացքում դարձյալ պետք է ի նկատի ունենալ այն հանգամանքը, վորի վրա մենք կանգ առանք վերը՝ հողի հումուսի և որգանական պարարտանյութերի մասին խոսելիս. չնայած ծխախոտի բերքն աղոտային պարարտանյութերից բարձրանում ե, բայց դարձյալ ավյալ հողի համար չափեց ավելի աղոտային պարարտանյութ տալու գեղագում բերքի վրակն իջնում ե. ծխախոտի մեջ ավելանում են սպիտակուցային նյութերն ու նիկոտինը. ծխախոտն ստանում ե անցանկանալի հատկություններ՝ վատ համ, դառնություն,

Սակայն, այդ վախը, վոր պետք է հաշվի առնել բարձրորակ ծխախոտների մշտակման ընթացքում, կարելի յե ըոլորդին հաշվի չառնել հասարակ ծխախոտների և մախորկայի մշակության գեղագում:

Այսուամենայինիվ, յեթե բաձրորակ ծխախոտը զուրկ է անհրաժեշտ քանակության աղոտից, նա լավ չի աճի և շատ քիչ բերք կտա:

Մեր պայմաններում ծխախոտն առաջին հերթին պետք է պարարտացնել աղոտային պարարտանյութերով, մանավանգ մեր ցածրադիր շրջանում, բայց գույնի, հումուսով աղքատ հողերի վրա:

Հումուսով հարուստ սևանողերի վրա ծխախոտի գաշտը կարելի յե չպարարտացնել աղոտային նյութերով, քանի վոր հա-



բուռտ սեահողերի պղոտի պաշարը, հաճախ նույնիսկ ավելի յէ, քան հարկավոր և ծխախոտի լավ բերք ստանալու համար Այդպիսի հողերում պիտք և գործածել ուրիշ պարարտանյութեր, վորոնց մասին կխռունք ստորև

Այսպես ուրեմն, ծխախոտի համար անհրաժեշտ աղոտային պարարտանյութերի քանակը վորոշելիս պետք է հիշել, վոր գործան շատ աղոտային նյութեր ենք տալիս ծխախոտախն, այնքան շատ և ավելանում նրա բերքը, սակայն մի վորոշ աստիճանից նրա վորակն սկսում և իշներ

Ծխախոտի համար ընդունված աղոտային պարարտանյութերի միջին զազան կազմում ե 30—45 կիլոգրամ տղոտ ամեն մի հեկտարին, այս կամ այն աղոտական պարարտանյութի ձևով՝ 20% անոց ցիանամիղի, կամ տմմոնիում սուլֆատի դեղքում, դա հավասար ե 150-ից 225 կիլոգրամ պարարտանյութի

Փորձերը ցույց են տվել, վոր գործնականապես ծխախոտի համար առանձնապես նշանակություն չունի այն հանգամանքը, թե աղոտային պարարտանյութերից վորն և տրվում նրան, և ավ աղցեցություն են ունենաւմ ուղիւրը ան, ամմոնիում և լիմում և այլն, Պետք ե յինթաղիքի, վոր կաւցի իում ցիան ամի դն ել միանգամայն բարենպաստ աղցեցություն կունենա ծխախոտի դաշտը նախորոք նրանով պարարտացնելու դեպքում.

Աղոտային պարարտանյութերից՝ սելիտրան կարելի յէ դաշտ մացնել յերկու նվազով՝ կեսը ծխախոտը դաշտ անդափոխելուց առաջ, իսկ մյուս կեսը՝ ծխախոտը դաշտ անդափոխելուց 15—20 որ հետո:

Մեր պայմաններում աղոտական պարարտանյութերն ուժեն՝ կերպով բարձրացնում են բերքը, մանավանդ յեթե նրանց հետ միասին գործ են ածվում ֆոսֆորական պարարտանյութեր:

ՏՈՍՆՈՐԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՑՈՒԹԵՐ

Մեր պայմաններում ծխախոտի համար վոչ պակաս նշանակություն ունեն ֆոսֆորական պարարտանյութերը, վորոնք նույնպես բարձրացնում են ծխախոտի բերքը, Մրանցից սովորաբար մեզ մոտ գործ և ածվում ուռւուղեր վոչ ու ֆատը,

Մինչդեռ, ինչպես տեսանք, աղոտական պարարտանյութերի չափից ավելի բարձր դոզաներն իշեցնում են ծխախոտի վորակը,

սուպերֆուֆատը, ընդհակառակը՝ նպաստավոր ազդեցություն և դործում ծխախոտի վրբակի վրա, նրա ասորափմենտի վրա:

Սուպերֆուֆատը մեզ մոտ շատ լավ կարող ե ազդել ազուտական պարարտան յութերի հետ միասին գործածելու դեպքում: Նա կարող ե նպաստել այն բանին, վոր ազուտական պարարտանյութերը բարձրացնեն բերքը, սակայն ծխախոտի վրակը պահպանվի, չի չնի, ինչպես կարող ե տեղի ունենալ միակողմանի ու առատ ազուտական պարարտացման դեպքում:

Բացի այդ, հարուստ սևանողերի դեպքում, ուր բարձր սորեցի ծխախոտի մշակության համար չափից ավելի տառատ ազուտ և պարունակվում, նրա քացանական ազդեցությունը ծխախոտի վրակի վրա կարելի յէ մեղմացնել ֆուֆորակուն պարարտանյութեր, որինակ՝ սուպերֆուֆատ գործածելով, սակայն, նման շատ հարուստ հողեր մենք շատ քիչ ունենք, ուստի մեծ մասամբ ծխախոտի համար պետք ե գործածել ազուտական և ֆուֆուրական պարարտան յութերը մի առեղջութեղի առեղջութեղի այստեղ առաջանակածեցած կամ զգացած վանի վոր ցիանամիզը և սուպերֆուֆատն իրար խառնել չի կարելի, քանի վոր այդ դեպքում սուպերֆուֆատի միջի սննդանյութն ավելի դժվարալույծ է դառնում և ավելի քիչ և սուպաղործվում բռյաների կողմից: Այդ և պատճեռը, վոր խորհուրդ և տրվում այս պարարտանյութերը հողի մեջ մացնել առանձին-առանձին:

Սովորաբար, սուպերֆուֆատի չափը (դոզա) կազմում է 45-ից 60 կիլոգրամ P_2O_5 (սուպերֆուֆատի նշանակալից մասը). այդ նշանակում ե, վոր յեթե մենք ունենք 14^0 -անոց սուպերֆուֆատ, ապա ամեն մի հեկտարին պետք ե տալ 320-ից 428 կիլոգրամ պարարտանյութ:

ԿԱԼԻՊՈՒՄ ՊԱՐՎՏԱՆՅՈՒԹԵՐ

Ծխախոտն առասպարակ էկալիքում սիրող բույսերը-ի շարքին և պատկանում: Նա մի հեկտարից վերցնում է մոտ 100 կիլոգրամ կալի (Կ₂O), թենիւթաղբաւմ են, վոր մյուս կողմից նա ավելի հեշտ և հայթայթում կալիումի ազերը հօդից, քան մի շարք այլ դաշտային մշակույթներ, հողային նույն պայմաններում:

Համենայն դեպք, յեթե հողն աղքատ ե կալիումի աղերով:

ծխախոտը, ինչպես և մյուս քույսները, լով չի աճում, ցածր բերք և տալիս Այդպիսի դեպքում ծխախոտի դաշտը պետք և պարար-տացնել կալիումի պարարտանյութերով:

Կալիումի պարարտանյութերը գործ են ածվաւմ մեկ ել այն դեպքում, յերբ հողը հարուստ և ազոտով (ուժեղ սևահողերը) և աղքատ՝ կալիումով. այդ դեպքում ֆոսֆորի և կալիումի պա-րարտանյութերն ապահովում են թե բարձր բերքը և թե ծխա-խոտի բարձր փորակը:

Սակայն մեր հողերը մեծ մասամբ հրարիսային ճագում ունե-նալով, իրենց մեջ շատ հաճախ մեծ քանակությամբ կալիումի աղեր են պարունակում և այն աստիճան շատ, վոր մյուս կուրառ-րաները կալիումի աղերով պարարտացնելու դեպքում, բերքը համարյա թե չի բարձրանում:

Մխախոտը կալիումի աղերով պարարտացնելու փորձեր մեզ մոտ առայժմ չեն կատարվել, այսուամենայնիվ, ի նկատի ունե-նալով մեր հողային պարմանները, կալիումի պարարտանյութերը կարելի յե մասսայականորեն գործ չածել, մինչև խնդրի փորձ-նուկան լուսաբանումը:

Իմանալու համար, թե վար հողերի վրա կարելի յե կալիումի պարարտանյութեր գործ չածել, ընդունված և ոգովել հետեւյալ դրությունից:

Հայտնի յե, վոր կալիումով հարուստ հողերի վրա ծխախո-տի մեջ մեծ քանակությամբ կալիումոքսիդ (K₂O) և պարունա-կում: Այդ կալիումոքսիդի քանակը, յեթե ծխախոտի մեջ քլորը շատ չե, ինչպես տեսանք զրբույկի սկզբում, պայմանավորում և ծխախոտի բավարար այրվելու հասկությունները: Կալիումոքսիդը ծխախոտի մեջ Յ տոկոսից պակաս չպետք ել լինի (ըստ Նեսոլիերի անհրաժեշտ Յ, վոր ծխախոտը պարունակի նույնիսկ 5—6% K₂O), Յեկ ահա, յեթե ծխախոտի մեջ կալիումոքսիդը Յ տոկոսից պակաս չե, ապա այդպիսի ծխախոտի դաշտը կարելի յե պարար-տացնել միայն աղոտական և ֆոսֆորական նյութերով, իոկ կա-լիումի պարարտանյութեր գործ չածել:

Յեթե կալիումի պարարտանյութերի գործածման համար հարմար պայմաններ կան, ինչպես որինակ կալիումով աղքատ, բայց գույնի քիչ հումուս պարունակող՝ հողերում, խրախու-մում և կիրառել այսպես կոչված լը ի վ հանքային պարար-

տացում. այսինքն՝ տալ հողին և ազոտական, և ֆոսֆորական և թե կալիումի պարաբռանյութերից տարածված են սիլվի-

նիտր, կառնալիտը և կալիումքլորիտը Դժբախտաբար այս նյութերն իրենց մեջ մեծ քանակությամբ քլոր են պարունակում, վոր մանավանդ ծխախոտի համար, ինչպես տեսանք վերը, անցանկալի յե

Այս տեսակներից պետք են գերադասել մոխրը, վորպես կալիումի պարաբռանյութը. մոխիրն իր մեջ բացի կալիումոքսիդից, պարունակում են նաև ֆոսֆոր և կիր, իսկ վոր ամենակարևորն ե, իր մեջ սիլինիտի նման քլորիդներ չի պարունակում, վորի համար կարդ են խոշոր չափով նոպատել ծխախոտի վորակի բարձրացմանը, մեծացնելով վերջինիս մեջ կալիումոքսիդի օլոց կալիումի պարաբռանյութեր գործածելու դեպքում ընդունված ե ամեն մի հեկտար ծխախոտի դաշտին տալ այնքան պարաբռանյութը, վոր նրա մեջ լինի 50-ից 75 կիլոգրամ կալիումոքսիդ (Կ.Օ.):

ԱՅՍՊԵՍ ՈՒՐԵՄՆ, ծխախոտի դաշտերը մեզ մոտ անշուշտ պարաբռացման կարիք են զգում, Վորպես պարաբռանյութ պետք ե ոգտագործել գոմաղբն (ուր նաև կա), իսկ հանգային պարաբռանյութերի գեղպատմ աղոտական և ֆոսֆորական պարաբռանյութեր, Առաջիններից են ամեննիումուլֆատը, սելիարան և ցիանամիդը, իսկ ֆոսֆորական պարաբռանյութերից՝ սուլֆո-ֆոսֆատը:

Կալիումի պարաբռանյութերից, մեր պայմաններում, ամենանպատակահարմարը պետք են համարել մոխիրը:

Ազոտային նյութերով և գոմաղբով պարաբռացնելիս, մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, թե ինչ սորտի ծխախոտի հետ գործ ունենք. այսպես, ցիանջեռ հասարակ ծխախոտներն առատ ազոտային պարաբռացումից չեն վախենաւմ և ստացվող մեծ բերքը վորակի տեսակներից ել. այդ տեսակի ծխախոտի համար բավարար ե լինում, բայց բարձր, թանգործեք սորտերի ծխախոտն ազոտով պարաբռացնելիս, պետք ե զգուշ լինել վորպեսպի վերջինս չազդի նրա վորակի վրա:

Հանգային պարաբռանյութերը կարելի յե ծխախոտի դաշտ-

մացնել վաղ գարնանը, ծխախոտը դաշտ տեղափոխելուց 20 կմ
ավելի որ առաջ:

Հատուկ ուշագիր մոռեցում պետք և ունենալ ծխախոտի
պարաբռացման գործին ցանքացրջանառություն ունեցող տնտե-
սություններում, Պետք և իմանալ թե, զոր դաշտն ինչ նյութով
պարաբռացնել:

Այսանդ նշենք, զոր յեթե յերկրորդ կամ յերրորդ տարին
նույն տեղը ծխախոտ և ցանքում, ապա պարաբռացումն անհրա-
ժեշտ և (թե ազոտով և թե ֆոսֆորով). Յեթէ ծխախոտին նախոր-
դում են թիթեռնածաղիկ բույսեր (առվույտ, վիկ, կորնգան), ապա
այդ զեպքում, նրանցից անմիջապես յեկազ ծխախոտն ազոտով
չպետք և պարաբռացնել, բայց ֆոսֆորական նյութերով կարելի
յէ պարաբռացնել, մանագմանք յեթե առվույտը, կորնգանը կամ
վիկը նախորդ տարում ֆոսֆորական պարաբռանյութ չեն ստա-
ցել Այս վերջին մշակույթներին պետք և միայն ֆոսֆորական
պարաբռանյութ տուլ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՑԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ 3

Ա.

ԾԽԱԽՈՏԻ ԲՈՒՅՍԻ ՄՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ԾԽԱԽՈՏԻ ԲՈՒՅԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ	7
Նիկոսին	8
Ապիտակուցային նյութեր	8
Սալպետեր	9
Անազոս նյութեր	10
Անազոս եկսարակուային նյութեր	10
Որդանական թթուներ	11
Եթերային յուղեր	11
Մոխրանյութեր	11

Բ.

ԾԽԱԽՈՏԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Պարարտանյութերի գործածման պայմանները	13
Մխախուի մշակույթի համար անհրաժեշտ հու- դային պայմանները	13
Որդանական պարարտանյութեր, գոմաղը	15
ՀԱՐՄԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ	17
Աղոտական պարարտացման պայմանները	17
Ֆուֆորտկան պարարտանյութեր	18
Կալիումի պարարտանյութեր	19



ԳԱԱ ՀԽՍՀ Գիտ. Գրադ.



FL0002249

ԳԻՒԸ 40 ԿՈՄ.

A 24083

074.



Г. ДАВТЯН

Удобрение культуры табака

СЕЛЬХОЗГИЗ

1934

ЭРИВАНЬ